ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 45 90 47

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

ՇԱԲԱԹ
22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014Թ. № 30 (338)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



ՀՐԱՉ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ. «Սիսիանի՝ ծայրահեղ վատ վիճակում գտնվող ներհամայնքային ճանապարհներում ոչ մի լումայի աշխատանք չի նախատեսվել համայնքային բյուջեով, ինչպե՞ս հասկանալ»

Ճանապարհաշինություն

Հրաչ Գաբրիելյանի ծննդավայրը պատմական Բռնակոթ գյուղն է: Ծնվել է 1956-ին, 1973 թվականին ավարտել միջնակարգը, ընդունվել Երեւանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ավտոմոբիլային ճանապարհների շինարարության բաժինը: Բուհն ավարտելուց հետո՝ 1978-ին, աշխատանքի է անցել Գորիսի N919 շինվարչությունում: Մեկ տարի հետո վերադարձել է Սիսիան՝ աշխատանքը շարունակել Սիսիանի ճանապարհների շինարարության եւ նորոգման վարչությունում (**ԴՐՍՎ**)՝ որպես աշխղեկ, 1982-ից՝ գլխավոր ճարտարագետ, 1989-ից գլխավորել է վարչությունը: 1995-ին ազատվել է աշխատանքից, մեկ տարի աշխատել Վայքում: 1996-ին հիմնել է «Սիսիանի ճանշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որ ղեկավարում է մինչեւ այժմ: Ամուսնացած է, ունի երեք զավակ, անկուսակցական է: Սա այցեքարտ՝ նախաբանի փոխարեն:

Ընկերությունը, ինչպես ներկայացնում է, ստեղծվել է զրոյից, ասֆալտգործարանը եւ ջարդիչ սարքավորումը ձեռք է բերել Գորիսի N919 ճանշինվարչությունից: Մարդիկ կային, որ հավատ չունեին, թե դրանք նորմալ կգործեն, թե նրա ձեռնարկածը կդառնա կազմակերպություն (ճանշինվարչություն), բայց ինքն այլ կարծիքի էր: Երբ դպրոցական ընկերոջը հայտնել էր, թե ինչ կստացվի (դե դուրս

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 3

Ուսուցչի նկատմամբ հարգալից վերաբերմունքը մնացել է անցյալում

Հանրակրթություն

Մինչեւ 1919թ. Աղքենդում (ներկայիս՝ Աշոտավան) դպրոց չի եղել, միայն Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումից հետո, երբ իշխանությունները սկսեցին զբաղվել կրթության հարցերով, գյուղում ստեղծվեց ծխական դպրոց: 1922թ. գյուղում բացվեց առաջին տարրական դասարանը: 1938-62թթ. դպրոցը յոթնամյա էր, իսկ 1962-89թթ.՝ ութամյա: 1989 թվականից առ այսօր միջնակարգ դպրոց է: 1975-90-ական թվականներին դպրոցում սովորում էր 160-180 աշակերտ: Սակայն հետագայում տնտեսական ճգնաժամով եւ արտագաղթով պայմանավորված՝ երեխաների թիվը նվազեց. 2003թ.՝ 133, 2010թ.՝ 100, ներկայումս՝ 60: Դպրոցը տվել է նշանավոր շրջանավարտներ, ովքեր հետագայում դարձան հասարակական-քաղաքական գործիչներ (Քաջիկ Օհանյան, Սիմոն Մարգարյան, Գրիգոր Հասրաթյան եւ այլք):

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Աշոտավանի միջնակարգ դպրոցի տնօրեն

Ո՞րն ես դու, Հայաստան:
Ես քեզ որոնեցի երկար ու ցավագին:
Հազար անգամ գտա:
Չգտա:
Կորցրի:
Շփոթվեցի ու կասկածեցի:
...Հետո ես նորից ճամփա կելնեմ:
Քեզ որոնելու:
Գտնելու:
Կորցնելու:
Կասկածելու:
Քեզ համար աղոթելու:

ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նվազել է բնակչության բնական աճը

Վիճակագրություն

ՀՀ վիճակագրական ազգային ծառայությունը հրապարակել է 2014 թվականի «ՀՀ մարզերը եւ Երեւան քաղաքը՝ թվերով» զեկույցը, որում ամփոփված են 2013-ի վիճակագրական տվյալները:

Ըստ դրա՝ մարզի բնակչությունը 2013-ին կազմել է 141,000 մարդ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 700-ով: 2013թ. մարզում ծնվել է 1479 երեխա, մահացել՝ 1274 մարդ, 2012թ. ծնվել է 1551, մահացել՝ 1284 մարդ: Բնական աճը մեկ տարում նվազել է 62 մարդով:

2013թ. մարզում արձանագրվել է 749 ամուսնություն, 112 ամուսնալուծություն:

Հանրապետության արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում Երեւանից հետո (40.9 տոկոս) երկրորդ տեղում Սյունիքի մարզն է (16.5 տոկոս): 2013թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերություն՝ 16.5%, գյուղատնտեսություն՝ 6.8%, շինարարություն՝ 5.4 %, մանրածախ առեւտուր՝ 1.4 %, ծառայություններ՝ 1.3%:

Ըստ վիճվարչության՝ 2013-ի տվյալներով ամենաբարձր միջին ամսական զուտ եկամուտը Սյունիքի մարզում է՝ 109,058 դրամ:

Ամենաբարձր միջին անվանական ամսական աշխատավարձը եւս գրանցվել է մեր մարզում՝ 178,606 դրամ: Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով սննդամթերքի վրա կատարված միջին ամսական ծախսերի ցուցակում Սյունիքը երկրորդն է Վայոց ձորից հետո. սյունեցին սննդամթերքին ամսական հատկացնում է միջինը 21,491 դրամ:

Սյունիքում գրանցվել է նաեւ ամբուլատորպոլիկլինիկական հիմնարկներ մեկ շնչի հաշվով ամենաբարձր հաճախումների թիվը՝ 6.3: Համեմատության համար նշենք, որ Երեւանում, որն այդ ցուցանիշով երկրորդն է, այն 4.6 է: Ընդ որում՝ նախորդ տարիներին եւս այս թիվը Սյունիքում ամենամեծն է եղել:

Սյունիքում (հասկանալի պատճառներով) ՀՀ-ում ամենաբարձրն է նաեւ 2013-ին արտադրական վնասվածքներից տուժածների թիվը՝ 29:

Լավ լուրեր էլ կան. 2013-ին գրանցված հանցագործությունների թվով 11-ի մեջ (Երեւան եւ մարզեր) Սյունիքը 9-րդ տեղում է՝ 566 հանցագործության դեպքով:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Բանակ-հասարակություն

Կապանի N6 դպրոցի պատանի երկրապահները

Սերտ համագործակցություն հասարակության հետ

Ահա հայոց բանակի մարտունակության գրավականներից մեկը

2014թ. նոյեմբերի 17-ը Կապանի պատմության մեջ կմնա որպես համաքաղաքային հայրենասիրական յուրօրինակ բաց դասի օր: Միջոցառումների նպատակն էր եւս մեկ անգամ անդրադարձ կատարել Սյունիքի պատմությանը, աշակերտներին դաստիարակել ռազմահայրենասիրական ոգով, հիմնել «Պատանի երկրապահ» ակումբներ:

Հանդիպում զինծառայողների հետ

Բազմաբնույթ միջոցառումների մեկնարկը տրվեց Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճից, որտեղ ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնած «Մեր բանակը մեր տունն է եւ մեր ամրոցը» կարգախոսով հանդիպում էր կազմակերպվել ՀՀ զինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի (ընդգրկում է Լոռվա եւ Տավուշի մարզերի զորամասերը) սպայական անձնակազմի, կորպուսի սյունեցի պարտադիր ժամկետային լավագույն զինծառայողների եւ նրանց ծնողների հետ:

Ելույթում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը նշեց, որ սյունեցի զինվորը միշտ էլ արժանապատվորեն է ծառայել հայրենիքին, բարձր պատասխանատվությամբ կատարել իր պարտականությունները, ապացուցել, որ մենք ունենք մարտունակ բանակ: Կարեւորելով Սյունիքի պատմաաշխարհագրական դիրքը՝ նա Սյունիքը համարեց Հայաստանի ողնաշարը, առանց որի հզորության չենք ունենա ո՛չ Հայաստան, ո՛չ Արցախ: Մարզպետը կարեւորեց նմանատիպ միջոցառումների նշանակությունը, քանի որ դրանցով ամրանում է զինվոր-ծնող-սպա շղթան:

ՀՀ ԶՈՒ 3-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Օնիկ Գասպարյանը նշեց, որ պատերազմն ավարտված չէ, եւ թշնամին ամեն պահ սահմանում ստեղծում է լարված իրավիճակ, որ ազդում է սպայակազմի ու զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի վրա: Այդ պայմաններում մեր բանակը մեծ պատասխանատվությամբ է կատարում իր մարտական առաջադրանքները

Կապանի քաղաքապետ Ա.Հայրապետյան, ԶՈՒ 3-րդ կորպուսի հրամանատար Օ.Գասպարյան, Սյունիքի մարզպետ Ս.Խաչատրյան, ԶՈՒ 1-ին կորպուսի հրամանատար Տ.Փարվանյան

եւ միշտ պատրաստ է դիմակայելու ամեն սադրանքի: **«Ձեր որդիները դժվարին, վտանգավոր, բայց չափազանց կարեւոր առաջադրանք են կատարում՝ զենքը ձեռքին թշնամու հետ անմիջական շփման պայմաններում պահելով մեր սահմանները»**, – նշեց կորպուսի հրամանատարը:

Ներկաները տեսաֆիլմով ծանոթացան ՀՀ ԶՈՒ 3-րդ բանակային կորպուսի պատմությանը, նրա ձեռքբերումներին, մարտական պատրաստվածությանը, ինչպես նաեւ Լոռվա ու Տավուշի մարզերի աշխարհագրական դիրքին ու տեսարժան վայրերին:

Ժամկետային զինծառայողները եւ ծնողները շնորհակալություն հայտնեցին հրամանատարությանը՝ հոգատար վերաբերմունքի, բանակում առողջ մթնոլորտ ստեղծելու համար, իսկ զինվորի մայրն էլ ցանկություն հայտնեց, որ ամեն առավոտ զինվորը հրամանատարին զեկուցի. **«Պարո՛ն հրամանատար, իմ հերթապահության ընթացքում ոչ մի պատահար չի գրանցվել»:**

Հյուրերին իրենց երաժշտական կատարումներով ողջունեցին Կապանի մշակույթի կենտրոնի երաժիշտները, ինչպես նաեւ Նոյեմբերյանի զորամասի գեղարվեստական ինքնագործ խումբը:

ՀՀ ԶՈՒ 3-րդ բանակային կորպուսի հրամանատարը պարտադիր ժամկետային սյունեցի լավագույն զինծառայողներին տվեց կարճատեւ արձակուրդ, իսկ նրանց ծնողներին՝ շնորհակալագրեր:

Բաց դաս Կապանի N2 ավագ դպրոցում

Կապանի N2 նորակառույց ավագ դպրոցում Սյունիքի մարզպետը ողջունեց «Պատանի երկրապահ» ակումբի անդամներին եւ նրանց կոչ արեց հպարտանալ Սյունիքի պատմությամբ, դաստիարակվել նախնիների մարտական ոգով: Ակումբն ունի 20 անդամ, կանոնադրություն, օրացույց: Նա ծանոթացավ նաեւ դպրոցի փառքի սրահին՝ նվիրված Արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակին, Վազգեն Սարգսյանին, ինչպես նաեւ նորաստեղծ ակումբի առօրյան ներկայացնող անկյուններին:

Դպրոցի դահլիճում 11-12-րդ դասարանների աշակերտների հետ Սյունիքի մարզպետն անցկացրեց բաց դաս՝ «Սյունիքի պատմությունը» թեմայով՝ ներկայացնելով Զանգեզուրյան գոյամարտի նշանակությունը, հատկապես Արսեն Շահմազյանի, Գարեգին Նժդեհի գործունեությունը: Նա շեշտեց հանգամանքը, որ եթե այդ ժամանակաշրջանում Գարեգին Նժդեհը չծավալեր նման պայքար, ապա Զանգեզուրը նույնպես արժանացած կլիներ Արցախի եւ Նախիջեւանի ճակատագրին:

«Դուք պետք է հպարտանաք, որ սյունեցի եք: Հպարտանաք ձեր պատմությամբ, անցյալով, որ ավանդել են ձեր պապերը՝ Սյունիքը պահելու, պաշտպանելու, այն ավելի զորացնելու պատգամով», – ասաց Սուրեն Խաչատրյանը:

«Պատանի երկրապահ» ակումբ՝ Կապանի N 6 հիմնական դպրոցում

ՀՀ կրթության եւ գիտության, պաշտպանության նախարարությունների, «Երկրապահ կամավորական միություն» ՀԿ-ի՝ այս տարվա սեպտեմբերին ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ՀՀ տարբեր դպրոցներում մեկնարկել է «Պատանի երկրապահ» ակումբների ստեղծման գործընթաց, որից անմասն չմնաց նաեւ Կապանի N 6 հիմնական դպրոցը, որտեղ մեծ տոնակատարության էր վերածվել ակումբի հիմնումը:

17 հոգուց բաղկացած պատանի երկրապահների ջոկատի երդման արարողությունից հետո ներկաներն ականատես եղան «Հավերժական կտակ» խորագրով հետաքրքիր միջոցառման: Աշակերտները գեղեցիկ գրական եւ երաժշտական անցումներով ներկայացրին Արցախյան պատերազմի հաղթական ուղին, երկրապահ կամավորական ջոկատների կազմավորման պատմությունը, ինչպես նաեւ դպրոցում արդեն ավանդույթ դարձած Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների անունով դասարանների անվանակոչման արարողությունները:

Դպրոցի տնօրեն Մարինե Դավթյանը նշեց, որ «Պատանի երկրապահ» ակումբի ձեւավորման նպատակն է դպրոցականների մեջ ներարկել հայրենասիրական ոգի, դաստիարակել երկրի արժանապատիվ քաղաքացիներ, ովքեր պատրաստ կլինեն մեր հերոսների թողած ավանդները շարունակել: Նա հույս հայտնեց, որ ակումբը կատարելու է իր կանոնադրական պարտականությունները, իսկ դպրոցի տնօրենությունն ու մանկավարժական կոլեկտիվը ստեղծելու են նպաստավոր պայմաններ նրա գործունեության համար:

Սյունիքի մարզպետ, ԵԿՄ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ Սուրեն Խաչատրյանը պատանի երկրապահներին խորհուրդ տվեց լինել մեր պապերի արժանի հետնորդը:

ԵԿՄ փոխնախագահ Մխիթար Հարությունյանը երկրապահական ընտանիքի անունից շնորհավորեց ներկաներին «Պատանի երկրապահ» ակումբի ստեղծման առիթով եւ հույս հայտնեց, որ այն պատվով կկատարի իր առաքելությունը, թեպետ. «կապանցին հայրենասիրության դասերի կարիք չունի»:

Տոնական միջոցառումից հետո բացվեց պատանի երկրապահ կամավորականների դասասենյակը: Ակումբն ունի կանոնադրություն, ամսագիր եւ դասացուցակ, ըստ որի՝ շաբաթական երկու օր կանցկացվեն համապատասխան դասընթացներ:

Իսկ միջոցառման ավարտին բաց թողնված աղավնիները, կարծեք, խորհրդանշում էին ներկաների ցանկությունը՝ թող հարատեւի խաղաղությունը, նոր կազմավորվող ջոկատների ստացած ռազմական գիտելիքներն գործնականում կիրառելու անհրաժեշտություն:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ըստ Լեհվազի բնակչի՝ փոքր հէկի կառուցումից հետո Մեղրի գետում միայն կոյուղաջրերն են մնալու

Հանրային քննարկում

Սույն թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ Սյունիքի մարզի Լեհվազի գյուղապետարանում տեղի ունեցան «Գրին Փաուեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մեղրի-1» փհէկի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Նախագծող «Գիդէպինվեստ» ՍՊԸ-ի գլխավոր ճարտարագետ Էդվարդ Մկրտչյանը ներկայացրեց նախագծի տեխնիկատնտեսական մասը:

«««Մեղրի-1» փհէկն ունենալու է 2.4 մեգավատ ընդհանուր հզորություն՝ բաղկացած գլխամասային հանգույցից, մոտ 1.9 կիլոմետր երկարությամբ ճնշումային խողովակաշարից եւ հէկի շենքից: Գլխամասային հանգույցում տեղադրվելու են ձկնանց կառուցվածք, ճնշումային ավազան, ջրընդունիչ հանգույց եւ ջրթափային պատվար: Ճնշումային խողովակաշարը լինելու է 1420 մմ խողովակաշարով: Հէկի շենքում տեղադրվելու է երկու հիդրոագրեգատ՝ 2.4 մեգավատ ընդհանուր հաշվարկային հզորությամբ: Բնապահպանական սանիտարական ելքը կազմում է 100 լ/վրկ: Խողովակաշարն անցկացվելու է գոյություն ունեցող ոռոգման ջրատարի կողքով», – ասաց Էդվարդ Մկրտչյանը:

Լեհվազի համայնքապետ Սասուն Զաքարյանը նշեց, որ համայնքը, իհարկե, ողջունում է նախագիծը, բայց բոլոր չափանիշները եւ նորմատիվները պետք է պահպանվեն:

Բնակիչները հարց ուղղեցին՝ ո՞վ է վերահսկելու, որպեսզի 100 լ/վրկ ջուրը պարտադիր պահպանվի:

«Դա վերահսկողության կարիք չի զգում, այդ ջուրն ավտոմատ գնալու է: Մեր նախագծով ձկնուղու նիշը գտնվում է ավելի ցածր, քան ջրընդունիչի նիշը», – պատասխանեց Էդվարդ Մկրտչյանը:

Լեհվազ համայնքի բնակչուհին հարց ուղղեց. **«Ի՞նչ է շահելու Լեհվազեցին այդ կառույցից...ի՞նչ եք ակնկալում, որ մենք մեր համաձայնությո՞ւնը տանք, թե՞... »:**

«Գրին Փաուեր» ՍՊԸ-ի մենեջեր Խաչատուր Ավետիսյանն ասաց. **«Հիմնական աշխատողները լինելու են համայնքի բնակիչները: Մենք համայնքի ղեկավարի հետ քննարկել ենք, որ ուզում ենք խաղաղապարակ կառուցել համայնքի համար, եւ մեր անելիքը լինելու է շարունակական»:**

«Ինչ-որ խաղաղապարակ ստեղծելով, ինչ որ բարեգործություն անելով...դա մի քանի տարվա խնդիր է, բայց չէ՞ որ մարդիկ այստեղ տարիներով ապրում են», – արձագանքեց բնակիչը:

«էկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ Ինգա Զարաֆյանը նշեց, որ անցկացվող հասարակական լսումները պետք է վերաբերեն ոչ թե նախագծի տեխնիկական մասին, այլ ռիսկերին, որոնք պետք է արտացոլված լինեն ՇՄԱԳ փաստաթղթում:

«Դուք պետք է ներկայացնեք

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 5

Բաց դաս Ծավում

Բնապահպանություն

Նոյեմբերի 15-ին Ծավի Մարատ Մարգարյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ բնապահպանական յուրօրինակ միջոցառում՝ մասնակցությամբ ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանի, բնության պահպանության ոլորտին առնչվող՝ մայրաքաղաքից ժամանած մասնագետների:

Այդ օրն անսովոր աշխուժություն էր դպրոցում: Միջոցառմանը մասնակցում էին ինչպես կրթօջախի, այնպես էլ Ճակատենի, Շիկահողի, Ներքին Հանդի դպրոցների աշակերտներ: «Հայաստանում բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացում ՄԱԶԾ/ԳԷՀ» ծրագրի ղեկավար Կարեն Ճենտերեճյանը զրույց անցկացրեց «Ավելի լավ ճանաչենք մեր հրաշալի բնաշխարհը» թեմայով, այնուհետեւ լուսանկարների ցուցադրությամբ ներկայացրեց Սյունիքի բուսական եւ կենդանական աշխարհը, մարզի լանդշաֆտները եւ հատուկ պահպանվող տարածքները: Օզոնի ազգային կենտրոնի մասնագետ Լիանա Բաղդասարյանը մատչելի օրինակներով դպրոցականներին պատմեց օզոնային շերտի պահպանության անհրաժեշտության մասին, ներկայացրեց օզոնային շերտը քայքայող նյութերը, նաեւ՝ թե ինչպես պաշտպանվել ուլտրամանուշակագույն ճառագայթներից: Այս ամենի մասին մուլտֆիլմ ցուցադրվեց, իսկ դպրոցականներն իրենց տպավորությունները հանձնեցին թղթին՝ կատարելով օրվա թեմային առնչվող նկարներ:

Բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանն իր խոսքում նշեց, որ հայրենի եզերքի ապագա տերերին ուզում են զինել գիտելիքներով, որ ավելի արդյունավետ լինեն նրանց գործողությունները բնապահպանության գործում: **«Բնապահպանության խնդիրները լուծելի են, երբ յուրաքանչյուր անհատ, յուրաքանչյուր պատանի ինքն իրեն համարում է այդ խնդրի լուծողը»,** – ասաց փոխնախարարը: Բնապահպանության նախարարության լրատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմեն Վարդանյանը եւս իր խոսքում կարեւորեց դպրոցականների դերը հայրենի բնությունը, շրջակա միջավայրն անաղարտ պահպանելու գործում: **«ՀՀ կառավարության, բնապահպանության նախարարության կազմակերպած միջոցառումներն արժեք չեն ունենա, եթե հասակ չառնի բնությունը սիրող սերունդ»**, – այսպես եզրափակեց իր խոսքը բանախոսը: Հայաստանում ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության ծրագրերի ղեկավար Անահիտ Սիմոնյանն իր խոսքում այն միտքը հայտնեց, որ ամենաարդյունավետ ներդրումը կրթության ոլորտում արված ներդրումն է, մանավանդ եթե դա արվում է գյուղերում ապրող դպրոցականների համար:

Նորիկ Հարությունյանը, բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը եւ Ծավի գյուղապետ Սեյրան Զաքարյանը

Ըստ ամենայնի՝ միջոցառումը բնապահպանական մի բաց դաս էր, որից գոհ էին թե՛ կազմակերպիչները, թե՛ դպրոցականները: Համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն Յուրա Մարտիրոսյանը, Ծավի գյուղապետ Սեյրան Զաքարյանը երախտագիտություն հայտնեցին մայրաքաղաքից ժամանած հյուրերին: Դպրոցականներին բաժանվեցին «Խուստուփ» եւ «Զանգեզուր» պետական արգելավայրերի մասին պատմող գրքույկներ, ինչպես նաեւ ուսումնական պարագաներ եւ գրենական պիտույքներ, հիշատակված դպրոցներից յուրաքանչյուրին հանձնվեց մեկական հեծանիվ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀՐԱՉ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ. «Սիսիանի՝ ծայրահեղ վատ վիճակում գտնվող ներհամայնքային ճանապարհներում ոչ մի լումայի աշխատանք չի նախատեսվել համայնքային բյուջեով, ինչպե՞ս հասկանալ»

Ճանապարհաշինություն

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

գրած սարքավորումն ի՞նչ պիտի լինի), պատասխանել էր. եթե պահանջվող պահեստամասերը գտնի, էլեկտրականության հետ կապված ամեն ինչ ինքը կանի:

Այդ օրվանից հետո շատ ջրեր են հոսել, ավելի ստույգ՝ անցել է 18 տարի: Արդեն ընկերությունը ոչ մի բանի կարիք չունի, կադրերով եւ մեքենասարքավորումներով հագեցած է. **«Որեւէ աշխատանք կատարելու համար որեւէ ընկերությունից տեխնիկա վարձակալելու խնդիր չունեմ»** – ասում է տնօրենը :

Դժվար չէ՞ր զրոյից նոր կազմակերպություն ստեղծել, մանավանդ կադրերի համալրման առումով, կրկին հարց եմ տալիս: **«Դժվարն առաջին տարին էր, երբ ես ե՛ւ գլխավոր ճարտարագետ էի, ե՛ւ աշխղեկ, ե՛ւ ամեն-ամեն ինչ: Կամաց-կամաց մարդկանց սովորեցրինք, աստիճանաբար գործին տիրապետեցին, դարձան մասնագետներ: Գրեյդերավար պատրաստեցինք, ասֆալտ պատրաստող եւ փռող, նախկին կազմակերպությունից, որտեղ տարիներ ի վեր աշխատել եմ եւ վեց տարի ղեկավարել, ոչ մի կադր չենք հրավիրել, որովհետեւ մեր ընկերությանը զուգահեռ գործում էր»:**

Բնականաբար, ընկերության տնօրենից նախեւառաջ փորձեցինք տեղեկանալ, ավելի ճիշտ՝ ընթերցողի հիշողությունը թարմացնել (մեր թերթն ընկերությունն առանձին հրապարակմամբ ներկայացրել է 2007 թվականին («Սյունյաց երկիր», 20 նոյեմբերի, «Զմռանը բաց մայրուղի ունենալու եւ հարակից այլ հարցերի մասին»), թե որն է «Սիսիանի ճանշին» ընկերության ձմեռային սպասարկման տարածքը: Մանավանդ որ այս տարի նախորդ տարվա համեմատ ձմեռն ավելի վաղ է թակել մեր դուռը, դրանով լրացուցիչ հոգս պատճառել ճանապարհաշինարարներին: Նոյեմբերի 3-ին տեղացած առատ ձյունը լուրջ փորձություն էր (ասենք, որ առաջին ձյունն ավելի վաղ էր տեղացել՝ հոկտեմբերի 17-ին) ճանապարհաշինարարների համար, տնօրենը տեղեկացնում է, որ ունեն պահանջվող քանակությամբ շլաք եւ ավազ, եւս երեք բեռնատար աղ պիտի ներկրեն: Իսկ ընկերությունը սպասարկում է Սյունիքի դարպասներից մինչեւ Գորիսի սահմանն ընկած 51.5կմ միջպետական, Սիսիան-Դաստակերտ 26կմ հանրապետական, նաեւ Սիսիանի խաչմերուկից մինչեւ Շաղատ մարզային նշանակության ճանապարհները: Պետբյուջեից (տրանսպորտի եւ կապի նախարարություն) ձմեռային սպասարկման համար հատկացվել է 31 մլն դրամ, եւս 11-12 մլն դրամ հատկացվում է մարզային ճանապարհների սպասարկման համար: Տնօրենի փոխանցմամբ՝ ձմռան տարեշրջանին ընդառաջ տեխնիկան նորոգվել է (բնական տարերքի դեմ մարտի կնետվեն մեկ գրեյդեր, երեք շլաք շաղ տվող մեքենա, ձյուն մաքրող եւս մի մեխանիզմ): Ձնառատ օրերին առավել վտանգավոր վիճակ է ստեղծվում Սյունիքի դարպասներից մինչեւ Գորայք ընկած հատվածում, որտեղ անպակաս են լինում բուքն ու քամին: Ընդհանրապես մարզի ճանշին կազմակերպություններից յուրաքանչյուրն իր նեղ օղակն ունի: Մեղրեցի ճանապարհաշինարարի համար դա Դիբագի լեռնանցքն է, գորիսեցիներինը՝ Թասի ոլորանները, «Սիսիանի ճանշին»-ին «բաժին է ընկել» Սիսիանի լեռնանցքը: **«Սարն անցնում ես, արդեն տանն ես»,** - ասում են ճանապարհ կտրողները:

«Սիսիանի լեռնանցքը մեր ռազմավարական նշանակություն ունեցող հատվածն է: Երբ տեսնում ենք՝ եղանակը կտրուկ սկսվում է փոխվել, «Վիլիսով» ստուգայց ենք կատարում, որը հիմնականում լինում է խոր գիշերով, - ասում է զրկուցակիցս եւ հավելում, որ իրենց վստահված միջպետական ճանապարհը հեշտ վերահսկելի է, երբ ձյունը սկսում է տեղալ, դուրս է գալիս Սիսիանի խաչմերուկ, եւ Սյունիքի դարպասի, եւ Գորիսի կողմից եկող ավտոմեքենաներից տեղեկություն ստանում ճանապարհի վիճակի մասին եւ ըստ այդմ գործում: Ի դեպ, Սիսիանի ռելիեֆն ու եղանակային պայմաններն այնպիսին են, որ բուքը, քամին ձյունը դաշտերից քշում, լցնում են միջպետական ճանապարհը՝ դժվար անցանելի դարձնում, երբեմն էլ կաթվածահար անելով երթեւեկությունը: Ժամանակին մայրուղու երկայնքով փայտե ցանցապատնեշներ էին տեղադրում, որ ճանապարհը փոքրիշատե պաշտպանում էր ձյան հաստ շերտով պատվելուց: Հրաչ Գաբրիելյանը կողմ է դրանք տեղադրելուն, բայց նաեւ մտավախություն ունի. **«Դրանք, ասենք, տեղադրեցինք, ո՞վ պիտի տիրություն անի: Այսօր դրեցիր, վաղը տերը չես»:**

Ինչպես տեղեկացանք, այս պահի դրությամբ ընկերությունում 30 մարդ է աշխատում, իսկ թե, այնուամենայնիվ, ինչ մասնագետի կարիք ունեն, պատասխանում է՝ մեխանիզատորի: **«Պրոֆտեխուսումնարանները, որտեղ ժամանակին մեխանիզատոր կադրեր էին պատրաստում, Խորհրդային Միության փլուզումից հետո փակեցին դռները, մենք էլ մասնագետ ենք պատրաստում, բայց իրավունք չունենք մի թղթի կտոր տալ որպես վկայական»:**

Մինչեւ ընկերության տնօրեն Հրաչ Գաբրիելյանին հանդիպելը նույն օրը «Սյունյաց երկրի» լրագրողներս աշխատանքային այցով եղանք Սիսիանի տարածաշրջանի Աշոտավան գյուղում: Ճանապարհը բարեկարգ էր այլ համայնքներ տանող ճանապարհների համեմատ: Համայնքի ղեկավար Արմեն Բեգլարյանը տեղեկացրեց, որ շաբաթներ առաջ համայնքի հիմնախնդիրներին ծանոթանալու նպատակով Աշոտավան էր այցելել Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Գյուղի բնակչությունը մարզի ղեկավարին դիմել էր միջհամայնքային ճանապարհը բարեկարգելուն օժանդակելու խնդրանքով: Այդ գործն օպերատիվորեն իրականացրեց «Սիսիանի ճանշինը», ինչը մատչելի է դարձրել Սիսիան եւ մոտակա բնակավայրերը

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 5

Ուսուցչի նկատմամբ հարգալից վերաբերմունքը մնացել է անցյալում

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

2013-14 ուստարում առաջին դասարան է հաճախել յոթ աշակերտ, որ երկու աշակերտով հետո համալրվել է, 2014-15 ուստարում՝ երեք, իսկ դպրոցն ավարտել է ութ աշակերտ, այս ուսումնական տարում կավարտի հինգ աշակերտ: Ուրախալի է այն, որ հաջորդ ուսումնական տարիներին առաջին դասարան կհաճախի հինգից ավելի աշակերտ: Նախորդ ուսումնական տարում բարձրագույն ուսումնական հաստատություն է ընդունվել հինգ շրջանավարտ: Աշոտավանի մանկապարտեզ է հաճախում 20 երեխա:

Մեր այցելության ժամանակ ինֆորմատիկա առարկայի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ էր հայտարարվել: Մնացած բոլոր հաստիքները համալրված են. դպրոցում աշխատող 20 մանկավարժից 18-ն ունի բարձրագույն կրթություն, իսկ 2-ը՝ միջին մասնագիտական, ովքեր երկար տարիների փորձ ունեն: Դպրոցն աստիճանաբար համալրվում է երիտասարդ կադրերով: Դպրոցում նորանշանակ տնօրենին հեշտությամբ հարմարվեցին (Էդգար Հովհաննիսյանն Աշոտավանի միջնակարգ դպրոցում պաշտոնավարում է 2014թ. հուլիսից), քանի որ նրա գործունեությանը վաղուց էին ծանոթ:

Երեք աշակերտ մասնակցել է շախմատի օլիմպիադայի տարածաշրջանային փուլին, ինչպես նաեւ արդեն մեկնարկել է այս ուսումնական տարվա հանրապետական օլիմպիադաների դպրոցական փուլը: Տնօրենն ակնկալում է, որ որոշ առարկաներից հաջողություն կունենան:

Այս ուսումնական տարում ուսուցիչների աշխատավարձը թեթեւակի բարձրացել է: Նշենք, որ ոչ բոլոր ուսուցիչներն են ապահովված դրույքաչափով:

Աշակերտներն ապահովված են դասագրքերով, յուրաքանչյուր դպրոցի դասագրքերի վարձավճարների 10 տոկոսի չափով զեղչ է տրամադրվում, որը, բնականաբար, հատկացվում է անապահով ընտանիքի երեխաներին:

Թեմատիկ, կիսամյակային գրավոր աշխատանքների տետրերը միայն որոշ առարկաներից են վերցրել, իսկ դպրոցում ուսուցիչները կարող են պատճենահանել մնացած գրավոր աշխատանքները:

Ուսուցիչները պարբերաբար անցնում են վերապատրաստման դասընթացներ՝ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու, նորագույն մեթոդներով դասապրոցեսն անցկացնելու համար:

Աշոտավանի միջնակարգ դպրոցը հիմնանորոգման կարիք ունի: Տանիքը, հատակը, պատուհաններն ամբողջովին պիտի փոխվեն: Ջմռանը դիմակայելու համար պատուհանները փակել են պոլիէթիլենային թաղանթով, որ չի խոսում մեր պետությունում հանրակրթական դպրոցի բարձր վարկանիշի մասին: Ջեռուցումն իրականացվում է փայտե վառարաններով, քանի որ գյուղը գազիֆիկացված չէ: **«Սրանից ավելի վատթար վիճակում գտնվող դպրոցներ էլ կան: Ճարտարապետներից մեկի խորհրդով կազմել ենք դպրոցի հիմնանորոգման նախահաշիվ 45 հազար ԱՄՆ դոլարի սահմաններում, հուսով ենք՝ առանձին անհատներ եւ կազմակերպություններ կլինեն, որ կցանկանան տրամադրել այդ միջոցները, բայց պետք է նշեմ, որ նախեւառաջ ակնկալում ենք պետության աջակցությունը»,** – մեզ հետ զրույցում նշեց դպրոցի տնօրեն Էդգար Հովհաննիսյանը:

Դպրոցի նախկին տնօրեն Հովսեփ Օհանյանի օրոք մարզադահլիճում որոշակի աշխատանքներ են կատարվել, բայց դպրոցական գույքն ամբողջովին փոխելու կարիք կա:

Տարիներ շարունակ համագործակցում են «Վորլդ վիժն Հայաստան»-ի հետ, իսկ մոտ ապագայում նրա աջակցությամբ նախատեսվում է օժանդակ տնտեսություն ստեղծել. 10 մեղվափեթակ կտրամադրեն դպրոցին, ինչպես նաեւ ջերմոցային տնտեսություն կստեղծեն: Կազմակերպությունն աջակցում է նաեւ աշակերտական խորհրդի աշխատանքներին, դպրոցական միջոցառումներին տրամադրում համապատասխան պիտույքներ:

«Dasaran.am» կրթական ծրագրին Աշոտավանի միջնակարգ դպրոցը նույնպես միացել է, թեպետ չենք կարող այստեղ մի կարեւոր հանգամանքի վրա ուշադրություն չդարձնել: Ճիշտ է, դպրոցներն ապահովված են համապատասխան ինտերնետային կապով (անվճար տրամադրում է Կրթության տեղեկատվական ազգային կենտրոնը), բայց այն երբեմն չի ապահովում համապատասխան արագություն: Այն պահին, երբ մենք դպրոցում էինք, կապ չկար, քանի որ հոսանքի խնդիր էր առաջացել. Տոլորսի միջնակարգ դպրոցի հետ միասին մի կապից են օգտվում: Պետք է նշենք նաեւ, որ եթե ցանցում ուսուցիչները գրանցումները ճիշտ ժամանակին չեն կատարում, դպրոցի վարկանիշը ցածրանում է: Փաստորեն, ստացվում է, որ ոչ իր մեղքով դպրոցը հայտնվում է պրոբլեմի առաջ, եւ ուսուցիչը ստիպված, եթե համակարգիչ չի ունենում, պիտի դիմի հարեւանի, բարեկամի օգնությանը: **«Գրանցում անելուն հատկապես տարիքով ուսուցիչները դժվարությամբ են հարմարվում, նրանց օգնում են երիտասարդ ուսուցիչները, դպրոցի օպերատորը»,** – նշեց տնօրենը: Ուսուցիչները դժգոհեցին կապի արագությունից, կայքի ծանրաբեռնվածությունից, ինչպես նաեւ բավարար քանակով համակարգիչ չունենալուց: Նշենք, որ հաճախ այդ կապը միայն մեկ համակարգչի է միացված լինում:

Աշակերտներին տաք սնունդ տալու համապատասխան պայմաններ դպրոցում կան, բայց դեռեւս ծրագիրը չի գործում, իսկ չոր սնունդ տրամադրում են:

Դպրոցի տնօրենը հատկապես շեշտեց, որ թղթաբանության պատճառով հաճախ չեն հասցնում լիարժեք հետեւել ուսումնական պրոցեսին: Մարզկենտրոնից ուղարկվող գրություններին էլեկտրոնային եղանակով են պատասխանում, բայց կապի անորակ լինելու պատճառով հաճախ ստացվում է, որ թերանում են իրենց աշխատանքում եւ ժամկետի մեջ չեն տեղավորվում:

Անցյալ միասնական քննություններին դպրոցի շրջանավարտներից մեկը ֆիզիկա առարկայից ստացավ 19.75 միավոր. **«Բնական է, որ առանց կրկնուսուցման չեն կարող բարձր միավորներ ստանալ, բայց ասեմ, որ այդ երեւույթը պայմանավորված է ե՛ւ կրթական ծրագրերի թերությամբ, ե՛ւ ընդունելության քննությունների բարդությամբ, ինչու չէ, երբեմն նաեւ մոդային տուրք տալով: Մենք ունեցել ենք աշակերտներ, ովքեր առանց լրացուցիչ պարապմունքի ընդունվել են բուհ»,** – նշեց տնօրենը:

Տնօրենի հավաստմամբ՝ ժողովուրդը հարգում է ուսուցչին, գիտի նրա արժեքը, մինչդեռ հայոց լեզվի եւ գրականության երկարամյա ուսուցիչ Գոհար Օհանյանը հակառակը պնդեց. **«Անցյալում է մնացել ուսուցչի նկատմամբ ունեցած հարգալից վերաբերմունքը, որ կարելի է պայմանավորել աշակերտների՝ չափից դուրս ազատամիտ լինելով, առանց բարդույթների պահվածքով, պետության կողմից ըստ արժանվույն չգնահատվելով, ինչպես նաեւ համացանցում ուսուցիչների մասին հաճախակի ներկայացվող ոչ հաճելի տեսանյութերով»:**

Դպրոցը սերտորեն համագործակցում է գյուղապետարանի հետ՝ հանդիպումներ, զանազան միջոցառումներ կազմակերպելով: Ի վերջո, եթե անկեղծ լինենք, այսօրվա բազմաթիվ մեռնող գյուղերի չափանիշը նաեւ դպրոցն է. եթե դպրոց կա, ուրեմն գյուղը դեռ «շնչում է»: Գյուղապետ Արմեն Բեգլարյանի խոսքով. **«Սերտորեն համագործակցում ենք դպրոցի հետ: Նորընտիր տնօրենն էլ դպրոցի նվիրյալ է, մեծ ուշադրություն է դարձնում դասի արդյունավետությանը, աշակերտների դաստիարակությանը»:**

Նոր ուսումնական տարում դպրոցի նորություններից էր տեսախցիկը, որով վերահսկվում է դպրոցի առօրյան: Հարցին, թե արդյոք դա չի կաշկանդում ուսուցիչներին, նրանք պատասխանեցին, որ սկզբնական շրջանում անսովոր էր, բայց հիմա արդեն հարմարվել են: Բացի դրանից՝ նրանք առանց տեսախցիկի էլ գիտեն ճիշտ ժամանակին կատարել իրենց պարտականությունները: Աշակերտներին ավելի զգոն պահելու համար սա լավագույն միջոցներից է համարվում:

Դպրոցում տիրում է առողջ մթնոլորտ: Ուսուցիչներն ու աշակերտները կարող են իրենց հուզող ամեն հարցով դիմել տնօրենին, վերջինս էլ հնարավորության սահմաններում փորձում է աջակցել նրանց: **«Քանի որ ներկայիս տնօրենն ավելի երիտասարդ է, մենք ավելի անկաշկանդ ենք շփվում, նա հարցերի լուծմանը յուրովի ու հետաքրքիր է մոտենում: Մի խոսքով՝ նա դպրոց նոր շունչ բերեց»,** – նշեցին աշակերտները: (Հանուն արդարության պետք է նշենք, որ թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները նախկին տնօրենի գործունեությունը նույնպես բարձր են գնահատում): Բացի ուսումնական հարցերից՝ մեծ տեղ է հատկացվում նաեւ դաստիարակությանը: Թեպետ գյուղում արատավոր բարքերը գրեթե բացակայում են, բայց յուրաքանչյուր ուսուցիչ նախեւառաջ կարեւորում է մարդ դաստիարակելու գաղափարը:

12-րդ դասարանի աշակերտներին հարցրինք, թե կցանկանային սովորել ավագ դպրոցում, եւ որոնք են դրա առավելությունները: Աշակերտները նշեցին՝ քանի որ ավագ դպրոցում հոսքային դասարաններ են եւ հնարավորություն ունեն իրենց նախընտրած առարկաներն ավելի շատ ժամերով անցնել, նախընտրում են ավագ դպրոցը: Աշոտավանում ներկայումս չկա աշակերտ, ով սովորում է Սիսիանի ավագ դպրոցում:

Հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Անահիտ Գրիգորյանը նշեց, որ դպրոցական ծրագրերը ծանրաբեռնված են, երբեմն աշակերտները չեն հասցնում լիովին նախապատրաստվել դասապրոցեսին, նույնիսկ բակում արդեն հազվադեպ է լսվում խաղացող երեխաների աղմուկ: Որպես երիտասարդ ուսուցիչ՝ նա նշեց, որ գյուղի դպրոցը լավագույն տարբերակ է ուսուցչական գործունեություն սկսելու համար:

Մանավանդ մայրենի լեզվի ուսուցիչների համար գերխնդիր է աշակերտներին ընթերցանության մղելը: Այսօր սոցիալական կայքերը բավականին շատ ժամանակ են խլում երեխաներից, որ ավելի է հեռացնում նրանց ընթերցանությունից:

Ավելի փորձառու ուսուցիչները պնդում են, որ մինչ կրթական համակարգի փոփոխությունները, որ ոչ միշտ կարելի է բարեփոխում համարել, իրենք նույն կերպ են աշխատել, պարզապես հիմա դասավանդման մեթոդների անուններն են փոխվել եւ ավելորդ թղթաբանությամբ շատ են զբաղվում: Ինչպես բոլոր դպրոցներում, այստեղ նույնպես դժգոհում են աշակերտների ուսման մակարդակից, ընթերցելուն շատ ժամանակ չտրամադրելուց: Նրանք ե՛ւ ժամանակ չունեն, քանի որ զբաղմունքի միջոցները շատացել են, ե՛ւ ցանկություն, քանի որ համակարգիչը շատ տեղեկություններ պատրաստի է մատուցում: Որպես ներկայիս սերնդի առավելություն նշվում է ժամանակակից տեխնիկային հեշտությամբ տիրապետելը, անկաշկանդ կարծիք հայտնելը:

Մեր օրերում գյուղական դպրոցների առաջնային խնդիրներից է աշակերտների թվի աստիճանական նվազումը, եւ, ինչպես ցույց տվեցին վերը նշված տվյալները, տասը տարվա ընթացքում Աշոտավանի միջնակարգ դպրոցի աշակերտների թիվը 50 եւ ավելի տոկոսով պակասել է: Այս երեւույթը սոցիալական ենթատեքստ ունի. գյուղում աշխատատեղերի գրեթե բացակայությունը: Երիտասարդները, չկարողանալով տեղում աշխատանք գտնել, ստիպված կա՛մ քաղաք են մեկնում, կա՛մ էլ արտագաղթում են:

12-րդ դասարանում սովորող հինգ աշակերտն էլ նպատակ ունի ուսումը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նրանց երազանքն է տարիներ հետո Աշոտավանի հիմնական դպրոցը տեսնել բարեկարգ, տեխնիկապես վերազինված ու աշակերտներով լի:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կապանում կանոնակարգվում է բացօթյա առեւտուրը

Առեւտուր

Կապանի քաղաքապետարանը, հաշվի առնելով քաղաքացիների բողոքն առ այն, որ խանութի տարածքից դուրս վաճառվող ապրանքատեսակների ցուցադրումը խանգարում է ազատ անցուդարձին, ինչպես նաեւ խախտում է սննդի անվտանգության կանոնները, ստեղծել է աշխատանքային խումբ, որը զբաղվում է վերը նշված խախտումների հայտնաբերմամբ եւ վերացմամբ: Աշխատանքային խմբում ընդգրկվել են քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության եւ եկամուտների հաշվառման ու հավաքման բաժինների, կոմունալ ծառայության աշխատակիցները: Հանձնաժողովի հետ համագործակցում են Կապանի ոստիկանության բաժինը եւ սննդի անվտանգության տեսչությունը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով՝ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը հանձնարարել է 2014թ. հոկտեմբերի 25-ից մինչեւ դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել ստուգումներ Կապան քաղաքի վարչական տարածքում գործող առեւտրի օբյեկտներում՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված խախտումների հայտնաբերման եւ արձանագրման նպատակով: Ըստ այդմ՝ շահառուներին ուղարկվել են համապատասխան ծանուցագրեր՝ սահմանված ժամկետում առեւտրի տաղավարները կարգավորելու, ինչպես նաեւ մայթեզրին կատարվող եւ քաղաքացիների անցուդարձը խոչընդոտող առեւտուրը դադարեցնելու մասին, այլապես կենթարկվեն վարչական տույժի՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգից քսանապատիկի չափով: Վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին խախտում արձանագրելու դեպքում տուգանք կնշանակվի սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Կապանի փոխքաղաքապետ Ռուդոլֆ Սարգսյանի տեղեկացմամբ՝ կենդանական եւ բուսական ծագում ունեցող գյուղմթերքների առեւտրով զբաղվողները կարող են իրենց ապրանքը վաճառել նախկին կենտրոնական շուկայի տարածքում՝ սկզբնական 5-6 ամիսներին ազատվելով հարկերից: Քաղաքապետարանը համապատասխան պայմանավորվածություն ունի նախկին շուկայի ղեկավարության հետ: Փոխքաղաքապետը նաեւ նշեց, որ բացօթյա առեւտուր կարող են իրականացնել միայն օրենսդրությանը համապատասխան թույլտվություն ստացած իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը, ընդ որում՝ միայն ծաղիկների, տնկիների, Ամանորի տոնակատարության համար նախատեսված եղեւնիների եւ սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի եւ զովացուցիչ ըմպելիքների համար: Բացօթյա առեւտուր իրականացնողները պետք է ստեղծեն պայմաններ՝ վաճառվող ապրանքների ապրանքային տեսքը, անվտանգությունը եւ որակն ապահովելու համար:

Առեւտրականների հետ զրույցից պարզեցինք, որ նոր տաղավար կառուցելու համար պահանջվում է միջինը 1.5-2 մլն դրամ (ներառյալ համապատասխան փաստաթղթերի կազմումը), որի հնարավորությունը շատերը չունեն: Նրանք դժգոհեցին, որ հատկացված տարածքը չի բավականացնում ողջ ապրանքատեսակը ցուցադրելու համար:

Մեզ մնում է միայն ակնկալել, որ քաղաքի տեսքի, անվտանգ սննդի եւ բնակիչների անցուդարձի խոչընդոտները վերացնելու համար կատարվող բարեփոխումներն ապրանքի գների անհարկի բարձրացման առիթ չեն դառնա:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ճշտվել է վնասի չափը

Արտակարգ դատահարից հետո

Նոյեմբերի 12-ին Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը հանդիպել է Բաղաբերդ թաղամասի թիվ 17 շենքի բնակիչների հետ (26 բնակարան): Հանդիպմանը ներկա էին նաեւ «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության ներկայացուցիչներ: Քաղաքապետը ներկայացրեց ջրատարի վթարի հետեւանքով բնակարաններին եւ գույքին հասցված վնասի փոխհատուցման չափերը՝ ըստ հանձնաժողովի հաշվարկման: Ընդհանուր առմամբ գույքի վնասը կազմել է 25մլն 274 հազար դրամ, վերանորոգման աշխատանքները գնահատվել են 32մլն 260 հազար դրամ, ավտոմեքենաներին հասցված վնասը կազմել է 2մլն 200 հազար դրամ, իսկ լրացուցիչ ծախսերը՝ 910 հազար դրամ:

Սեփ. լրատվություն

Ըստ Լեիվազի բնակչի՝ փոքր հէկի կառուցումից հետո Մեղրի գետում միայն կոյուղաջրերն են մնալու

Հանրային քննարկում

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 2

բոլոր բնապահպանական ռիսկերը, որպեսզի մենք հասկանանք՝ ինչ պետք է քննարկենք», – ասաց Ինգա Զարաֆյանը:

«Խողովակաշարն անց է կացվելու գոյություն ունեցող ոռոգման ջրատարի կողքով: Այսինքն ոչ մի անտառահատում, ոչ մի թուփ, ոչ մի ազդեցություն չի ունենալու շրջակա միջավայրի վրա», – պատասխանեց նախագծող «Գիդէպինվեստ» ՍՊԸ-ի գլխավոր ճարտարագետ Էդվարդ Մկրտչյանը:

«Դուք ռիսկերի մասին ոչինչ չեք ասում...ՇՄԱԳ-ի մասին ոչ մի խոսք չկա», – ասաց Ինգա Զարաֆյանը:

ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի փորձագետ Զարուհի Զուռնաչյանն արձագանքեց. **«Նա գլխավոր ճարտարագետն է, ոչ թե բնապահպանը, այդ պատճառով բնապահպանական տեսանկյունից ներկայացնելը լավ չի ստացվում, թե չէ նախագծում ներկայացված է եւ կենսաբազմազանությունը, եւ բուսականությունը, եւ ջրային ռեսուրսների պահպանությունը...ամեն ինչ ներկայացված է»:**

«էկոԼուրը» հետաքրքրվեց, թե ինչ ազդեցություն կունենա փոքր հէկը Մեղրի գետի էկոհամակարգի վրա:

Էդվարդ Մկրտչյանը պնդեց, որ ոչ մի բացասական ազդեցություն չի կարող ունենալ, քանի որ պահպանվելու են ՀՀ-ում գործող բոլոր նորմատիվները:

«էկոԼուրի» հարցին՝ ունի՞ արդյոք գետը սանիտարական ֆունկցիա բնակչության համար, բնակիչները պատասխանեցին. **«Վերեւի գյուղերի բոլոր կոյուղաջրերը լցվում են գետը, եւ գետում միայն կոյուղաջրերն են մնալու»:**

Հարցին, թե պոտենցիալ որքան ջուր կարող է վերցվել գետից խողովակների մեջ, նախագծող ընկերությունը պատասխանեց, որ հաշվարկային ելքից ավելի չի կարող վերցվել, քանի որ տուրբինի թողունակությունը հաշվարկային ելքով է որոշվում՝ 3.8 մետր խ/վ:

Հարցին, թե ինչու է այդ դեպքում ընկերությունը վերցնում այդքան մեծ խողովակներ, – Էդվարդ Մկրտչյանը պատասխանեց. **«Դա տեխնիկատնտեսական հաշվարկ է, դա մասնագիտական հարց է, երկար քննարկում կլինի»:**

Բնակիչներն արձագանքեցին՝ հէկի համար պահեստային ջուր է:

Ի պատասխան Էդվարդ Մկրտչյանն ասաց. **«Պահեստային ջրի ոչ մի խնդիր չկա, մեկ խողովակ է լինելու»:**

Նա նաեւ նշեց, որ փհէկը տարվա մեջ աշխատելու է երկու ամիս՝ վարարման ժամանակ, իսկ մնացած ամիսներին փոքր հզորությունով է աշխատելու:

Նշենք, որ ՀՀ բնապահպանության նախարարությանը ներկայացված «Մեղրի-1» փհէկի կառուցման նախնական գնահատման հայտում նշված է, որ փհէկը նորոգումների պատճառով տարեկան կշահագործվի 11 ամիս կամ 330 օր եւ ոչինչ այն մասին, որ ամբողջ հզորությամբ փհէկը աշխատելու է միայն երկու ամիս վարարման սեզոնին: Հայտում նաեւ նշված է, որ փհէկը տարեկան կարտադրի 10.56 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որը կապահովի տարեկան 214.2 միլիոն դրամ գումարի զուտ իրացում:

«Մեղրի-1» փհէկի կառուցման համար նախնական հաշվարկված ներդրումային գումարը կազմում է 1022.86 մլն դրամ, առանց ԱԱՀ-ի: Արտաքին ֆինանսավորման գումարը կազմում 716.0 միլիոն դրամ՝ 70%: Նախատեսվում է, որ «Մեղրի 1» փհէկը կկառուցվի եւ կշահագործվի 2014-2021թթ.:

Շահագործումը կսկսվի 2016թ. սեպտեմբեր ամսից:

Մեղրի գետի վրա արդեն իսկ կառուցված է երեք փհէկ, որոնք խողովակի մեջ են վերցրել գետի գումարային երկարության 20.81%-ը՝ ճգնաժամային վիճակ ստեղծելով գետի համար:

14 նոյեմբերի 2014թ., ecolur.org

ՀՐԱՉ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ. «Սիսիանի՝ ծայրահեղ վատ վիճակում գտնվող ներհամայնքային ճանապարհներում ոչ մի լումայի աշխատանք չի նախատեսվել համայնքային բյուջեով, ինչպե՞ս հասկանալ»

Ճանապարհաշինություն

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

հասնելը՝ այդ ուղղությամբ գտնվող Հացավան, Սալվարդ, Թասիկ: Համայնքի ղեկավարի ցանկությունն այն էր, որ հողային աշխատանքներին հաջորդի ասֆալտապատումը, այլապես արվածը ջուրը կընկնի, իսկ ուղղակի իմաստով եթե ձեւակերպենք՝ անձրեւաջրերը, ձնհալոցքի ջրերը նախկին վիճակին են հասցնելու համայնքային ճանապարհը:

Տնօրենի հետ զրույցում խոսվեց նաեւ «արտաճանապարհային» թեմաներից: Սյունիքի մարզ այցելողն առաջին տպավորությունը ստանում է Սյունիքի դարպասներից, իր ծարավը հագեցնում այդտեղի սառնորակ աղբյուրի ջրով: Բայց... տարածքը աղբատեղի է հիշեցնում, աղբամաններ են տեղադրված, սակայն դրանք դատարկ են մնում, իսկ աղբը թափում են՝ ուր պատահի: Որ շատերի կենցաղավարման կուլտուրան հեռու է բավարար լինելուց, կարելի է դատել այդ օրինակով: Հ.Գաբրիելյանը մտադիր է մի հաստիքով հավաքարար պահել, որ Սյունիքի դարպասի մերձակայքում հետեւի սանիտարական մաքրությանը...

Փորձառու ճանապարհաշինարարից չէինք կարող չհետաքրքրվել միջպետական մայրուղուց թեքվող եւ Զորաց քարերի մոտով Սիսիան քաղաք մտնող ճանապարհի վիճակի մասին: Նորագույն տեխնիկայով այդ ճանապարհի հողային պաստառը նորմալ տեսքի էր բերվել: Բայց արվածը երկար կյանք չունեցավ, եւ վարորդները նախկինի պես շարունակում են երթեւեկել խորդուբորդ ճանապարհով: Դրան նախորդ տարի հանրապետական ճանապարհի կարգավիճակ են տվել: Այդքանը: Լուծումը ճանապարհի հիմնանորոգումն է եւ ասֆալտապատումը:

Տարբեր ատյաններում այդ խնդիրը բարձրաձայնվել է, պատճառաբանությունը նույնն է՝ բյուջեում փող չկա: Ինչ վերաբերում է Սիսիան քաղաքի փողոցների անմխիթար վիճակին, մեր զրուցակիցը փոխանցեց, որ իր ղեկավարած ընկերությունն անցած տարի Սիսիան քաղաքում հազար քառակուսի մետր փոսային նորոգում է իրականացրել, նման աշխատանք համայնքում ընթացիկ տարում չեն իրականացրել: Այս առումով նա իր տարակուսանքը հայտնեց. **«Սիսիանի՝ ծայրահեղ վատ վիճակում գտնվող ներհամայնքային ճանապարհներում ոչ մի լումայի աշխատանք չի նախատեսվել համայնքային բյուջեով, ինչպե՞ս հասկանալ»:** «Սիսիանի ճանշին» ՍՊ ընկերությունն աշխատուժ եւ տեխնիկա ունի իրականացնելու ճանապարհաշինարարական աշխատանքներ, բայց այդ նպատակով անցկացվող մրցույթներն էլ իրենց կասկածելի տրամաբանությունն ունեն...

Մեր զրույցի ընթացքում խոսվեց գնաց այն մասին, որ փոսային նորոգումների որակը հեռու է բավարար լինելուց, դրանք կարճ կյանք ունեն, մանավանդ, Գորիսի եւ Սիսիանի ճանապարհներին:

Տնօրենը տեղեկացրեց նաեւ, որ ասֆալտապատման աշխատանքներում այս տարվանից նոր տեխնոլոգիա են կիրառում: Ավելի ստույգ, ցանցեր են տեղադրվում, նոր ասֆալտը փռում, ինչը թույլ չի տալիս՝ ճաքեր գոյանան:

Երբ հետաքրքրվում ենք, թե, այնուամենայնիվ, որն է ընկերության գործունեության ամենանեղ օղակը, չի հապաղում պատասխանել. **«Ֆինանսավորումը: Թող պատվեր տան, մենք բոլոր չափանիշները բավարարող աշխատանք կանենք»:**

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կրթություն՝ մեծահասակներին

2014թ. սկզբից «DVV international» գերմանական կազմակերպության ֆինանսավորմամբ գործող «Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն հիմնադրամը» հիմնական կրթություն ստացած սիսիանցիների համար տարբեր դասընթացներ եւ վերապատրաստումներ է կազմակերպում:

Ինչպես տեղեկացրեց հիմնադրամի ղեկավար Կարեն Հովհաննիսյանը, ծրագրի նպատակը համապատասխան դասընթացների միջոցով 16-17 տարեկանից բարձր անձանց ունակությունների եւ հմտությունների զարգացումն է, որպեսզի նրանք կարողանան աշխատաշուկայում դառնալ մրցունակ եւ դրանից հետո կա՛մ պարզապես աշխատանք գտնեն, կա՛մ՝ առավել լավ վարձատրվող աշխատանք:

Կազմակերպությունում անց են կացվում անգլերենի, ֆրանսերենի, համակարգչային ուսուցման, գործավարության, ծրագրավորման երկամսյա դասընթացներ: Կ.Հովհաննիսյանը հավաստիացնում է, որ իրենց մոտ կրթություն ստանալուց հետո շահառուների մոտ 10 տոկոսն աշխատանք է գտել, եւս 10 տոկոսը՝ փոխել աշխատանքը: Դասընթացների ավարտից հետո եւս նրանք կարող են օգտվել հիմնադրամի տեխնիկական միջոցներից: Դասընթացի մասնակիցը վճարում է դրա ինքնարժեքի 20 տոկոսը՝ 4000 դրամ, մնացածը՝ հիմնադրամը, սոցիալապես անապահով խավի համար ուսուցումն անվճար է:

Հիմնադրամի տարածքն անհատույց տրամադրել է Սիսիանի քաղաքապետարանը, վերանորոգել ու կահավորել «DVV international»-ը:

Հիմնադրամն իր տարածքն ու տեխնիկան անվճար տրամադրում է նաեւ սիսիանյան եւ այլ ՀԿ-ների՝ տարբեր միջոցառումների եւ դասընթացների կազմակերպման համար: Կենտրոնում ութ դասընթացավար է աշխատում:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Խնձորեսկի երախտավորներից մեկը

Վազգեն Բաղդագյուլյան. նա միշտ պայքարի մեջ էր

Սյունյաց բազմադարյան հողում շատ ճրագներ են վառվել: Տաթեւի համալսարանից մինչեւ Հարանց մեծ անապատի դպրոցը, ճրագներ, որոնք ճեղքելով ժամանակի խավարը, դարձել են ժողովրդի հոգու հացը, անմար կանթեղները նրա փրկության ու գոյատեւման բազմաչարչար ճանապարհին:

Շինականի խոփով, զինվորի սրով ու դպրության գրով ապրել ու գոյատեւել է մեր ժողովուրդը: Իր քար ու քերթերին կառչած զանգեզուրցին մի ձեռքով հաց է արարել, մյուս ձեռքով հյուսել իր հոգու եւ մտքի մատյանը՝ ի պահ հանձնելով հետագա սերունդներին: Լուսավորելով հանուրի գոյության ու մաքառումների ճանապարհը՝ շատ նշանավորներ են քայլել ամբոխների առջեւից՝ իրենց օրինակով ցույց տալով, որ մարդ արարածն աշխարհի է եկել ապրելու ոչ միայն հացիվ, այլեւ բանիվ:

Ինչպես աշխարհում ամեն գյուղ ու քաղաք, Խնձորեսկն էլ ունեցել է եւ ունի իր նշանավորները: Դեռեւս 1682-83 թվականներին գյուղի Սբ Հռիփսիմե եկեղեցում Մարտիրոս անունով գրիչը գրել է 329 էջանոց ձեռագիր մատյան, որից հայտնի է դառնում, որ «Խնձորէքը Ծագեծոր երկրի» գյուղերից մեկն է եւ հիշատակվում է 10-րդ դարից:

Սարգիս Պետրոսյան Ուսուբօղլի պատմիչը 19-րդ դարի վերջերին գրել է «Պատմական փշրանքներ» վերնագրով մի գիրք, որտեղ հյուսել է Խնձորեսկի ծագման եւ հիմնադրման մասին իր լեգենդը:

Տիգրան Սազանդարյանը (Տաթեւիկ Սազանդարյանի հայրը) 1921 թվականին գրել է Նժդեհյան Լեռնահայաստանի Ինքնավար Հանրապետության հիմնը (օրհներգը):

20-րդ դարի Խնձորեսկն Աշոտ Սաթյան ու Տաթեւիկ Սազանդարյան է ծնել ու հանձնել աշխարհին:

Գյուղի հպարտություններն են դարձել Գարեգին Սեւունցն ու Սուրեն Այվազյանը:

Հետո հայոց գիտությունների կաճառ է բարձրանում թիթեղագործ Հովսեփի որդի Վահան Ղազարյանը: Հետո Աշոտ Թելունցը դառնում է հայ փիլիսոփայական մտքի հսկաներից մեկը: Հետո պատմաբան Աբել Սիմոնյանը դառնում է Խորհրդային Հայաստանի հանրագիտարանի խմբագիր:

Հետո... մայրաքաղաք են գնում էլի ու էլի բազմաթիվ նշանավորներ, ովքեր չեն տեղավորվում գյուղական ու շրջանային մասշտաբներում:

Բայց այստեղ կանգ առնենք, մի քիչ շունչ քաշենք եւ նշենք նաեւ Վազգեն Բաղդագյուլյանի անունը: Նշենք, քանի որ Խնձորեսկի նշանավոր մարդկանց շարքում նրան շրջանցել հնարավոր չէ:

Առանց Վազգեն Բաղդագյուլյանի Խնձորեսկի նշանավորների շարքը լրիվ չէր լինի: Բաղդագյուլյանն իր գործունեությամբ եւ աշխատանքով խոր հետք է թողել մարդկանց հիշողություններում: Նա անցել է գյուղի անվանի մարդկանց դպրոցի միջով եւ վաստակել իր անվան եւ ճանաչելիության տարածությունը:

Եվ այսօր Բաղդագյուլյանը ոչ թե սոսկ նշանավորների մեջ ինչ-որ շարունակություն է, այլ մի անհատականություն, ում մարդիկ ճանաչում են որպես գիտնական, որպես մեծ ինտելեկտ ունեցող մտավորական, որպես հասարակական գործիչ-հրապարակախոս, որպես գործի մարդ, եւ ինչու չէ, նաեւ որպես բանաստեղծ ու արվեստագետ-արվեստասեր:

Վազգեն Բաղդագյուլյանն, իսկապես, իր անհատականությամբ, գիտական-հասարակական բուռն գործունեությամբ խոր հետք է թողել Գորիսի մտավորականության, ուսանող երիտասարդության եւ առհասարակ բնակչության լայն խավերի շրջանում:

Վազգեն Հովհաննեսի Բաղդագյուլյանը ծնվել է 1926թ. նոյեմբերի 11-ին, Խնձորեսկ գյուղում, հողագործ գյուղացիներ Հովհաննես եւ Շուշան Բաղդագյուլյանների օջախում: Հայր Հովհաննեսը, ով եղել է գյուղի վարսավիրներից մեկը, իմաստասեր մարդ է եղել եւ փոքրիկ Վազգենին ականջալուր զանազան պատմություններ արել հայ ժողովրդի եւ գյուղի մարդկանց մասին:

Յոթ տարեկանում Վազգենն ընդունվում է հայրենի գյուղի դպրոցի առաջին դասարանը: Գերազանց առաջադիմությամբ դասարանից դասարան փոխադրվող Վազգենի ամենասիրած զբաղմունքը դառնում է ընթերցանությունը:

Վազգենը սովորում էր 9-րդ դասարանում, երբ սկսվում է Մեծ հայրենականը: Ուրիշ իր շատ հասակակիցների հետ պատանի Վազգենը հայտնվում է անտղամարդ մնացած գյուղի հանդերում, աշխատում գիշեր-ցերեկ: Շուտով նա սովորում է Գորիսի գյուղտեխնիկումում:

Դեռ տասնութը չլրացած Վազգենը մեկնում է խորհրդային բանակ: Այստեղ նա ծառայում է շուրջ 13 տարի եւ զորացրվում մայորի զինվորական աստիճանով: Վերադառնալով Հայաստան՝ սովորում եւ ավարտում է Երեւանի եռամյա կուսդպրոցը եւ աշխատում Նոր Արեշում՝ որպես խորհրդատնտեսության տնօրեն: Առանց արտադրությունից կտրվելու սովորում է եւ ավարտում Վ.Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտը: Այդ ընթացքում պաշտպանում է գիտական թեզ եւ որպես պատմական գիտությունների թեկնածու աշխատում Երեւանի պետական համալսարանում՝ պատմություն առարկայի դասախոս: Թողնելով դասախոսի աշխատանքը՝ վերադառնում է հայրենի գյուղ եւ բնակիչների պահանջով աշխատում կոլտնտեսության նախագահ:

Այնուհետեւ դասախոսական աշխատանքի է անցել Երեւանի մանկինստիտուտի Գորիսի մասնաճյուղում: 1982-84 թվականներին եղել է մասնաճյուղի տնօրեն: Գրել է «Ալեքսանդր Գերցեն» եւ «Գերցենի գյուղացիական սոցիալիզմը» ուշագրավ աշխատությունները:

Գրել է բանաստեղծություններ, գիտական-հրապարակախոսական հոդվածներ, հանդես եկել հանրապետական եւ շրջանային մամուլում: Մահացել է 1994թ. հունվարի 15-ին: Թաղված է հայրենի գյուղի գերեզմանատանը:

Վազգեն Բաղդագյուլյանը բուռն եւ հակասական կյանքով է ապրել: Նա իր մտավոր բարձր կարողություններով ու խոր գիտելիքներով արժանի հեղինակություն էր վայելում Սյունիքում եւ նրա սահմաններից դուրս: Նա մեծ ճանաչում ուներ ժողովրդի մեջ որպես գործի ու համարձակ խոսքի մարդ: Նա առանձնաշնորհ խելքի ու եռանդի տեր մարդ էր, որի մտային շողարձակումները դժվար էր իր ապրած ժամանակի չափերի մեջ տեղավորել: Բաղդագյուլյանը գիտելիքների հզոր պաշար ուներ եւ հորդուն մտքեր, որոնք օժտված էին ժամանակաշրջանի միապաղաղությունը ճեղքելու ունակությամբ եւ միտված էին հասարակական կյանքում առաջացած նոր տեղաշարժերի լուսաբանմանը: Նա անհաշտ ու քննադատական մոտեցումներ ուներ սոցիալ-տնտեսական լճացումների նկատմամբ եւ այս դաշտում հաճախ բանավիճում էր զանազան գաղափարախոսների հետ, ովքեր կամ ուղղակի չէին տեսնում հասարակության ընդերքում առաջացած քաղաքական-գաղափարական, տնտեսական նոր տեղաշարժերի բուն էությունը:

Բաղդագյուլյանը հրապարակախոսի ավյունով պայքարում էր նորը չտեսնողների, առաջավորը քամահրողների, գաղափարական այն ճահճամիտների դեմ, ովքեր չէին ուզում սոցիալիզմի մեջ որեւէ թերություն տեսնել: Նա գաղափարական պայքար էր մղում այս ամենի դեմ: Եվ այդ պայքարն այնքան հորդուն ու բուռն էր, որ նա, երբեմն կորցնելով ինքնատիրապետումը, հաճախ դուրս էր գալիս պատշաճության սահմաններից:

Գաղափարական պայքարի այս հողի վրա էլ մշտապես հայտնվում էր հակասությունների խառնարանում եւ դրանից էլ տուժում էր գործնական կյանքի շատ հարցերում:

Նրան միայն տարիուկես հաջողվեց լինել հարազատ գյուղի կոլտնտեսության նախագահի պաշտոնում: Տնտեսության ղեկավարման հենց սկզբից էլ արմատական հակասություններ են առաջանում իր եւ վերադասի միջեւ: Ստանալով տնտեսության ղեկավարի պաշտոնը՝ Բաղդագյուլյանը փորձում է իր գաղափարները, տեսական գիտելիքները եւ համոզմունքներն իրականացած տեսնել գործնական կյանքում: Նա կարծում էր, որ կոլտնտեսությունը համայնավարական հասարակարգի պայմաններում ստեղծված ժողովրդական, արտադրական միավոր է, որի սեփականատերն աշխատավոր գյուղացին է, եւ նա է իր տնտեսության զարգացման հարցերը որոշում: Բաղդագյուլյանը կարծում էր, որ ճիշտ ղեկավարման եւ աշխատավորական ուժերի նպատակասլաց միավորման դեպքում հնարավոր է հասնել արտադրական բարձր ցուցանիշների եւ դրանով իսկ բարելավել մարդկանց կուլտուր-կենցաղային պայմանները: Այս եւ նման հարցերում Բաղդագյուլյանն ուներ իր ինքնուրույն մոտեցումները՝ հաճախ մոռանալով, որ վերադաս գոյություն ունի:

Բաղդագյուլյանն այն համարձակ խառնվածքն էր, ով չէր կարող գործիք դառնալ վերադասի առջեւ: Հենվելով ժողովրդի կամքի վրա՝ նա փորձում էր արտադրությունն ինքնուրույն կազմակերպել, ոչ թե կատարել վերադասի կարգադրությունները: Հասկանալի է, որ նման պայմաններում նրա գնացքը կայարան հասնել չէր կարող: Ինքնուրույն նախաձեռնությունները եւ արտադրական նորամուծությունները ոչ միայն ձեռնտու չէին վերադասին, այլեւ նա չէր կարող իր իրավունքը զիջել որեւէ մեկին, որքան էլ այդ մեկն արհեստավարժ լիներ իր գործում:

Բաղդագյուլյանի աշխատանքային տարիները համընկան գորբաչովյան «վերակառուցման» ժամանակների հետ: Խրուշչովից հետո սկսած գաղափարական հալիլոցը Գորբաչովի ժամանակ վերածվեց իսկական ձնհալի: Առաջին անգամ խորհրդային մարդն իր մտածածը բարձրաձայնելու իրավունք ստացավ: Հրապարակ դուրս եկած գաղափարակիրներն առաջ քաշեցին ազգային հոգսեր ու խնդիրներ: Հայոց անկախության եւ Ղարաբաղի ազատագրության

Սուրեն Այվազյանը եւ Վազգեն Բաղդագյուլյանը

Մեծարվեց ճանաչված երաժիշտ-կատարողը

Մշակույթ

Քաղաքապետարանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում նոյեմբերի 14-ին մեծարման երեկո էր՝ նվիրված հանրապետական եւ միջազգային մրցույթների դափնեկիր, Կապանի արվեստի պետական քոլեջի փողային բաժնի նախկին դասատու, ֆլեյտահար Հայկ Ավագյանին. լրացել է ճանաչված երաժշտի եւ մանկավարժի ծննդյան 65-ամյակը:

Իսկ ամեն ինչ սկսվեց նրանից, որ 1960 թվականին Երեւանից ժամանած մի խումբ երաժիշտ-մասնագետներ Կապանում հավաքագրում էին երաժշտական ձիրքով օժտված տղաների, ովքեր պիտի սովորեին Երեւանի գիշերօթիկ երաժշտական դպրոցում: Ընտրյալների մեջ էր նաեւ տասնամյա Հայկը, ով գիշերօթիկում փայլուն սովորելուց հետո առաջարկություն է ստանում նվագել Թբիլիսիի զինվորական նվագախմբում: Հընթացս սովորում եւ ավարտում է Թբիլիսիի Փալիաշվիլու անվան երաժշտական ուսումնարանը՝ ֆլեյտա մասնագիտությամբ: Ուսումնառության տարիներին հղկվում է նրա կատարողական արվեստը, ընդամին մասնակցում է մի շարք հանրապետական եւ միջազգային մրցույթների՝ արժանանալով դափնեկրի կոչման: Հայկ Ավագյան երաժիշտ-կատարողը չէր կարող բավարարվել ուսումնարանի կրթությամբ, ուստի ընդունվում եւ ավարտում է (գերազանց առաջադիմությամբ) Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (պրոֆեսոր՝ Հայկ Ղասաբյանի դասարանը): Միաժամանակ դասավանդում է Կապանի երաժշտական ուսումնարանում՝ հիմնադրելով ֆլեյտայի դասարանը, որտեղ աշխատել է մինչեւ 2009թ.: Հայկ Ավագյանը (1993-1994թթ.) ղեկավարել է Կապանի թիվ 3 երաժշտական դպրոցը՝ այս անգամ էլ դրսեւորելով կազմակերպչական ձիրք, բարձրացնելով սաների երաժշտական-կատարողական արվեստը, նպաստելով նրանց գեղագիտական դաստիարակությանը:

Հայկ Ավագյանը Կապան քաղաքում նպաստել է գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը՝ հիմնադրելով «Վարդագույն քարեր» վոկալ-գործիքային անսամբլը, 1978-ին, երբ ղեկավարում էր «Կապան» վոկալ-գործիքային անսամբլը, համերգային շրջագայության է մեկնել Բայկալ-ամուրյան մայրուղի, ինչի համար կոլեկտիվն արժանացել է ժողովրդականի կոչման: Երկար տարիներ ղեկավարել է Կապանի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու երգչախումբը՝ այդպիսով հոգեւոր երգեցողությունը դարձնելով շատ-շատերի սեփականությունը:

Հայկ Ավագյանի կյանքում եւս մի ուշագրավ դրվագ կա. Արցախյան պատերազմի տարիներին նա արձագանքեց երջանկահիշատակ մաեստրո Ֆելիքս Հայրապետյանի կանչին՝ ընդգրկվելով զինվորական նվագախմբի կազմում:

Այսօր ճակատագրի բերումով Հայկ Ավագյանը՝ ապրում եւ ստեղծագործում է Բելգիայում, որպես մենակատար հանդես գալիս Բերտեն, Լեֆդալ եւ Օստենբուրգ քաղաքների նվագախմբերում, երգում Բրյուսելի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու երգչախմբում՝ կարծես իր գործունեությամբ հավաստելով այն ճշմարտությունը, թե ամեն ինչ անցողիկ է, միայն երաժշտությունն է հավերժ…

Հանդիսությունը վարող Ռուզաննա Ավանեսյանը երեկոն սկսեց այն փաստի հրապարակմամբ, որ քչերին է բախտ վիճակվում հինգ տարեկանում բախել երաժշտական աշխարհի դուռը, 60 տարի շարունակ ապրել երաժշտությամբ, դաստիարակել ֆլեյտահարների մի քանի սերունդ, ովքեր պիտի հպարտանային իրենց սիրելի ուսուցչով, ուսուցիչն էլ հպարտանար իր սաներով, ովքեր շարունակում են իր սկսած գործը: Այնուհետեւ գնահատանքի խոսքերով հանդես եկան Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, ով վոկալ-գործիքային անսամբլում նվագել է Ավագյանի ղեկավարությամբ, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրենի տեղակալ Աշոտ Խաչատրյանը: Կապանի մշակույթի գործում ունեցած ավանդի համար Հայկ Ավագյանն արժանացավ Սյունիքի մարզպետի շնորհակալագրին, Կապանի քաղաքապետարանի պատվոգրին, ինչպես նաեւ արվեստի պետական քոլեջի շնորհակալագրին՝ երիտասարդ երաժիշտ-կատարողներ պատրաստելու համար:

Բոլոր գնահատանքներն իրեղեն դարձան, երբ Հայկ Ավագյանը ֆլեյտայով հնչեցրեց Գյուլկի «Մեղեդին», այնուհետեւ Ստեփան Զրբաշյանի «Պրելյուդը»:

Սիրելի ուսուցչին մեծարանքի խոսքեր հղեց եւ հուշեր պատմեց Երեւանի «Կեմ» կամերային անսամբլի գեղարվեստական ղեկավար, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, Անդրկովկասյան մրցույթի դափնեկիր Արմեն Ղուկասյանը: Ցուցադրվեցին Հայկ Ավագյանի մյուս սաների՝ Սանկտ Պետերբուրգի պետական ֆիլհարմոնիայի մենակատար, մրցանակների եւ դիպլոմների դափնեկիր Սասուն Առաքելյանի եւ Սամվել Ավանեսյանի (բնակվում է Բելգիայում) բարեմաղթանքների տեսաձայնագրությունները: Երաժշտական կատարումներով իրենց գործընկերոջը ողջունեցին Անահիտ Բաղդասարյանը, Թերեզա Հովհաննիսյանը: Արվեստի պետական քոլեջի ֆլեյտայի դասարանի սովորող Լիա Գրիգորյանը ֆլեյտայով հնչեցրեց Մոցարտի «Ռոնդոն», «Ուզանդարան» Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետից:

Շնորհավորանքի խոսք ասելուց զատ՝ Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը հոբելյարին պատվոգիր հանձնեց, Ռաֆիկ Տոնոյանը՝ «Ազատամարտի վետերանների միության» կողմից՝ հուշամեդալ:

Համերգային ծրագրի ավարտին հանդես եկավ տրիոն (Հայկ Ավագյան՝ ֆլեյտա, Աշոտ Խաչատրյան՝ թավջութակ, Սվետլանա Համբարձումյան՝ դաշնամուր)՝ հանդիսականին հրամցնելով Բրամսի «Հունգարական պարը»:

Վերջում երախտագիտության խոսքով հանդես եկավ Հայկ Ավագյանը:

«Շնորհակալ եմ, որ գնահատեցիք տարիների իմ վաստակը», - մասնավորապես ասաց նա եւ ցանկություն հայտնեց, որ Կապանի արվեստագետներին նվիրված նման միջոցառումներ հաճախակի կազմակերպվեն:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

կարգախոսներով հրավառված ժողովրդական զանգվածները դուրս եկան պայքարի ելագիծ:

Գաղափարական-քաղաքական, համաժողովրդական հզոր պայքարի այս շրջանում շատ բուռն էր Բաղդագյուլյանի գործունեությունը:

Հասկացնելու, բացատրելու, համոզելու շատ բաներ կային: Անկախության եւ Ղարաբաղի ազատագրության խնդիրներին հարիր Բաղդագյուլյանը հանդես եկավ մի շարք հրապարակախոսական, գիտական, վերլուծական հոդվածներով եւ ցույց տվեց, թե անկախությունն ինչ անգնահատելի արժեք է հայ ժողովրդի համար:

Դառնալով շրջանի առաջավոր մտավորականության դրոշակակիրը՝ նա անկախության գաղափարը դնում էր գիտական հիմքերի վրա եւ ցույց տալիս, որ հայ ժողովրդի ազգային բարձրագույն արժեքը նրա անկախությունն է: Խոսելով Ղարաբաղի ազատագրության հարցի շուրջ՝ Բաղդագյուլյանը կարծում էր, որ խորհրդային կայսերապետությունը դեմոկրատիա է խաղում, եւ այս հարցում հայ ժողովուրդն իր դարավոր երազանքն իրականացնելու համար հույսը պետք է դնի միայն իր ուժերի վրա:

Բանավեճը նրա տարերքն էր: Նա գիտեր, որ շրջապատում իր խոսքը հարգում են: Ուսանողությունը հիացած էր նրա դասախոսությունների բարձր մակարդակով, գեղեցիկ ու գրագետ պատմելաձեւով:

Ժամանակաշրջանի խնդիրների հոլովույթի մեջ նա կարողանում էր գտնել իրեն հատուկ բացատրությունները: Նա երբեմն առաջ էր քաշում այնպիսի համարձակ հարցադրումներ, որոնք իր դեմ հակասություններ էին ստեղծում, եւ նա երբեմն հայտնվում էր իր համար աննպաստ իրադրություններում: Բաղդագյուլյանը երբեմն գիտական իր խորաթափանցությամբ դեպքերից առաջ էր ընկնում՝ փորձելով ճեղքել ազատ խոսքի եւ մտածելակերպի խոչընդոտները: Նա փորձում էր բարձրաձայնել այնպիսի բաների մասին, որոնց ասելու ժամանակը դեռ չէր հասունացել: Բերենք նրա վարքագծին ու խառնվածքին հատուկ միայն մի օրինակ:

Կուսակցության շրջանային կոնֆերանսն էր: Դահլիճում նստած էին շրջանի կոմունիստ ակտիվիստները: Կոնֆերանսը նախագահող շրջկոմի քարտուղարներից մեկը ներկայացնում է շրջկոմի անդամների՝ նախօրոք կազմած ցուցակը եւ…

– Կո՞ղմ:

Բոլորը պատրաստակամ ձեռք են բարձրացնում:

– Դեմ չկա՞…

Դահլիճը մեկեն քարանում է: Բոլորն ապշած շուռ են գալիս դեպի դեմ արտահայտվողը: Առաջին անգամ են ականատես լինում նման համարձակության:

– Իսկ դու, ընկեր Բաղդագյուլյան, կարո՞ղ ես բացատրել՝ ում եւ ինչի ես դեմ, - ամբիոնի վերից որոտում է նախագահողը:

– Դեմ եմ Ձեր կողմից ներկայացրած թեկնածուների ողջ ցուցակին եւ քվեարկության անցկացման ձեր ձեւին, - հանգիստ ու անվրդով ասում է Բաղդագյուլյանը:

Մի պահ տիրում է շփոթ լռություն, իսկ քիչ հետո նախագահողը դիմում է պլենումի անդամներին.

– Առաջարկում եմ Վազգեն Բաղդագյուլյանին դուրս հրավիրել դահլիճից: Քվեարկում եմ, ովքե՞ր են կողմ…

Հարգելի՛ նախագահող, խնդրում եմ նեղություն մի քաշեք, ես իմ հոժար կամքով դուրս եմ գալիս, - ասում է Բաղդագյուլյանը եւ դանդաղ քայլում դեպի մուտքի դուռը:

Եվ այս ամենը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ գորբաչովյան հրապարակայնությունն ու դեմոկարատիան դեռ կյանք չէին մտել, երբ ամենուրեք անազատ խոսքի տիրապետություն էր, երբ կոմունիստական գաղափարախոսությունից դուրս այլ գաղափարախոսություն գոյություն չուներ, երբ կուսակցական վերադասը կարող էր իր ուզածի պես որոշել մարդկանց ճակատագրերը… Իսկ կուսակցության գաղափարներից ու պահանջներից շեղված անհատների նկատմամբ կուսակցական վերադասը որոգայթներ լարելու մեծ փորձ ուներ: Եվ այդ օրերին կուսակցական ղեկավարության համար ուղղակի անհրաժեշտություն էր Բաղդագյուլյանին հասարակությունից մեկուսացնելը… Պատճառները հայտնի էին, մնում էր առիթ ստեղծել…

Բաղդագյուլյանը գալիս էր ոչ թե գրքերից, այլ բուն իրականությունից: Նա վրահաս իրադարձությունների զարգացման ընթացքն ավելի խորն էր տեսնում, քան ժամանակաշրջանի շատ հասարակագետ-մտավորականներ:

90-ական թվականներին թափով ու որոշ պարտադրանքով սկսված սեփականաշնորհումը նա դեռեւս ժամանակավրեպ էր համարում եւ կողմնակից էր բազմակացութաձեւությանը: Այդ տարիներին նա գրեց բազմաթիվ հոդվածներ, որտեղ ցույց էր տալիս սեփականաշնորհման բուռն ընթացքում տեղի ունեցող ճակատագրական շտապողականությունը եւ աղաղակող թերությունները:

Բաղդագյուլյանը նաեւ բանաստեղծ էր: Որպես այդպիսին, նրա արխիվում պահպանվել են մի շարք ուշագրավ ստեղծագործություններ:

Քիչ ապրեց Բաղդագյուլյանը եւ կյանքից հեռացավ ուժերի ծաղկման շրջանում: Նա չմեռավ, այլ վառվեց աշխարհիկ հոգսերի կրակների մեջ, չվախճանվեց, այլ մորմոքվելով ու տառապելով սպառվեց սեփական անձի ու հանուրի ցավերի մեջ: Չընկավ, այլ տապալվեց: Նա գնաց այս աշխարհից որպես «Աբու-Լալայի» քարավանի առաջնորդ՝ ապրելով կյանքի մի ամբողջ ոդիսական:

Նա, իր հեքիաթի Պեգասը նստած, մտավ այս աշխարհ, ապրեց դոնքիշոտյան կյանքի իր դրախտը եւ թողեց գնաց հիասթափությունների ծնկածալ բեռներով: Նա Գերցենի (Հերցենի) մասին գիրք գրեց, որպեսզի ցույց տա աշխարհին, որ ինքը կարող է սավառնել գիտության բարձունքներում՝ մտածող-ստեղծագործողի տաղանդով:

Նա սովխոզ ու կոլխոզ վարեց ու ղեկավարեց՝ ցույց տալով, որ ինքը ոչ միայն մտքի, այլեւ գործի մարդ է: Բաղդագյուլյանի միտքը եւ ձեռքը մշտապես գործողության մեջ էին: Նա չափազանց խորն ապրեց 90-ականների իրադարձությունները եւ իր եզրակացությունների քանորդում ցույց տվեց, որ հանուն Ղարաբաղի ազատագրության եւ հանուն հայոց անկախության մինչեւ վերջ պետք է պայքարել:

Բաղդագյուլյանն ուներ հարուստ երեւակայություն, օժտված էր մտքի հզոր թռիչքներով: Նրա խոսքը պատկերավոր էր՝ համեմված հայոց լեզվի գեղեցկություններով:

Բաղդագյուլյանն արվեստագետի հոգի ուներ եւ ապրում էր տառապյալ ստեղծագործողի կյանքով:

Նրա մարդկային խառնվածքի մեջ մշտարթուն ոգու նման թեւածում էր ընդդիմադիր կամքը, բանակռվի մեջ մտնելու եռանդն ու ավյունը: Նա կարող էր դուր գալ կամ դուր չգալ, միջինը չկար նրա համար: Բաղդագյուլյանի հոգուն խորթ էին համլետյան անգործությունը եւ անվճռականությունը: Նա միշտ պայքարի մեջ էր…

ԱՐԿԱԴԻ ՇԱՏՈՒՐՅԱՆ
ՀԳՄ Սյունիք մասնաճյուղի նախագահ

Նշվեց Ուսանողների միջազգային օրը

1946 թվականից նոյեմբերի 17-ը նշվում է որպես Ուսանողության միջազգային օր, որ անվանում են նաեւ Ուսանողների միջազգային համերաշխության օր: Տոնի նախօրեին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Սյունիքի մարզային կենտրոնի եւ Սյունիքի մարզպետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր միջոցառում, որին ներկա էին Սյունիքի մարզում գործող բուհերի եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսական կազմը եւ ուսանողները:

Ուսումնական հաստատությունների ուսանողներին ողջունեց մարզպետարանի մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Սարգիս Դավթյանը, ով կարեւորեց ուսանողների դերը մեր երկրի վաղվա օրվա կերտման ճանապարհին, ինչպես նաեւ շեշտեց այն հանգամանքը, որ պետությունը պիտի նպաստավոր պայմաններ ստեղծի ուսանողների գործունեության եւ առաջխաղացման համար:

Իրենց ուսումնական հաստատությունների համառոտ գործունեության, ունեցած ձեռքբերումների եւ առկա հնարավորությունների մասին համառոտ ներկայացնելով՝ ուսանողները շեշտը դրեցին գիտելիքն ուժ է գաղափարի վրա: Նրանք միմյանց շնորհավորական խոսքեր հղեցին՝ մաղթելով վայելել ուսանողական կյանքի ամեն վայրկյանը, ինչպես նաեւ հանդես եկան գրական-երաժշտական համարներով:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Սյունիքի մարզային կենտրոնի ղեկավար Նվարդ Հարությունյանը, շնորհավորելով ուսանողներին, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի անունից նվերներ հանձնեց միջոցառման մասնակիցներին, իսկ մարզպետարանի մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Սարգիս Դավթյանը՝ ուսանողական խորհուրդների նախագահներին:

Տոնի առթիվ նոյեմբերի 17-ին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն ուսման մեջ առաջադիմություն ունեցող սյունեցի 26 ուսանողի հանձնեց շնորհակալագրեր եւ դրամական պարգեւներ: Մեջբերելով Գարեգին Նժդեհի խոսքերը. «Եթե ուզում ես իմանալ ազգիդ ապագան, նայի՛ր նրա երիտասարդությանը»՝ նա ասաց, որ ուսանողներն են երկրի ապագան, եւ յուրաքանչյուրի մեջ պիտի լինեն սյունիքյան ոգի, սյունիքյան շունչ ու մտածելակերպ, իսկ մեր երկրի հզորությունը մարդկային ներուժի մեջ է, այդ թվում՝ երիտասարդների:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը շնորհավորական խոսքում նշեց, որ մեր վաղվա օրը կախված է ուսանողների նպատակներից ու երազանքներից: Նա կոչ արեց զինվել գիտելիքներով, քանզի այսօրվա մարտահրավերներին հնարավոր է դիմակայել միայն գիտական հզոր մտքի ուժով:

Ուսանողներն իրենց հերթին շնորհակալություն հայտնեցին մարզպետին՝ մշտապես աջակցելու, իրենց դերը կարեւորելու համար, ինչպես նաեւ խոստացան ավելի շատ գիտելիքներ ձեռք բերել եւ ծավալել ակտիվ հասարակական գործունեություն:

Միջոցառումն ավարտվեց տոնական համերգով՝ Կապանի մշակույթի կենտրոնի երաժիշտ-կատարողների մասնակցությամբ:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երեխան ընտանիքի լույսն է

2014թ. ապրիլի 7-ից 2015թ. ապրիլի 7-ն ընկած ժամանակահատվածը ՀՀ կառավարությունը հայտարարել է Ընտանիքի տարի: Ծրագրի շրջանակներում ողջ տարվա ընթացքում անց են կացվել եւ դեռ կանցկացվեն բազում միջոցառումներ, որոնցից մեկն էլ նոյեմբերի 13-ին «Երիտասարդ ընտանիք» ակումբի եւ Սյունիքի մարզային գրադարանի սպասարկման բաժնի նախաձեռնությամբ կազմակերպված Վանյանների բազմանդամ ընտանիքը մեծարելու ցերեկույթն էր:

Վանյանների ընտանիքը ստեղծվել է Ղարաբաղում Զիրիֆ եւ Անուշ միությունից, ովքեր ունեցել են երեք որդի: Ընտանիքը, սակայն, 1988թ. սումգայիթյան ջարդերի պատճառով տեղափոխվել է Կապան, եւ երկու որդին հայրենիքի զոհասեղանին են դրել իրենց կյանքը՝ մասնակցելով Արցախյան ազատամարտին: Ընտանիքի միջնեկ որդին՝ Իգոր Վանյանը, ունի վեց զավակ, եւ, ինչպես սպասարկման բաժնի ընթերցասրահի վարիչ Զարուհի Մանգասարյանը նշեց, դա մեր օրերում իսկական հերոսություն է:

«Երիտասարդ ընտանիք» ակումբի նախագահ Կառլեն Թադեւոսյանը նշեց, որ այսօր ընտանիքը մեծ ճգնաժամ է ապրում, եւ ինչպես իր ուսումնասիրություններն են ցույց տալիս, մեզանում կանայք հրաժարվում են շատ երեխա ունենալուց միայն նյութական պայմաններից ելնելով: Վերջինս արձանագրեց այն փաստը, որ հարուստ պետություններում հիմնականում շեղված վարքի հետեւանքով ընտանիքի ինստիտուտն անկում է ապրում, իսկ ներկաներին էլ խորհուրդ տվեց հետեւել Վանյանների ընտանիքի օրինակին:

«Ազատամարտ կոմիտե» ՀԿ-ի նախագահ Խորեն Հարությունյանն արժեւորեց այս ընտանիքի երկու հերոս զավակի անցած մարտական ուղին՝ միաժամանակ նշելով, որ բազմազավակ ընտանիքներին պիտի մեծարի նախեւառաջ հասարակությունը:

Սյունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Աննա Ոսկանյանը նշեց, որ բազմազավակ ընտանիքը հասարակության համար լավագույն օրինակ է, եւ մեծ պատասխանատվություն է ընտանիքում դաստիարակել շատ երեխաներ: Նա Վանյանների ընտանիքին հանձնեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի տրամադրած 100 հազար դրամ, իսկ Սյունիքի մարզային գրադարանը գրենական պիտույքներ նվիրեց:

Սյունիքի մարզային գրադարանի տնօրեն Սուսաննա Մինասյանը շնորհակալություն հայտնեց Սյունիքի մարզպետին՝ ցուցաբերած օգնության համար, իսկ հյուրերին խոստացավ, որ նմանատիպ միջոցառումները շարունակական բնույթ են ունենալու:

Միջոցառումն իրենց գրական եւ երաժշտական կատարումներով լիարժեք դարձրին երաժշտական դպրոցի սաները, գրադարանի աշխատակցուհի Քրիստինե Վեզիրյանը եւ վոկալիստ Թերեզա Հովհաննիսյանը:

Ինչպես ասել է փիլիսոփաներից մեկը, ընտանիքը բնության հրաշալիքներից է, իսկ ինչպես ասաց բազմազավակ մայր Անահիտը, երեխան ընտանիքի լույսն է:

Ի դեպ, պարզվեց, որ բազմանդամ ընտանիքի հայրը՝ Իգոր Վանյանը, վերջերս է աշխատանք գտել:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դաստակերտ համայնքի ղեկավարին մեղադրանք է առաջադրվել

Իրավական

Սյունիքի մարզի Դաստակերտ համայնքի ղեկավարի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել համայնքի ղեկավար Ն.Ֆիլոսյանին:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Ն.Ֆիլոսյանը 1999թ.-ից հանդիսանալով Սյունիքի մարզի Դաստակերտ համայնքի ղեկավար՝ պաշտոնատար անձ եւ քաջ գիտակցելով համայնքի ղեկավարի ոչ միայն իրավունքները, այլ նաեւ պարտականությունները, այնուամենայնիվ անձամբ մասնակցել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպության կառավարմանը: Տվյալ ընկերությանը Դաստակերտ համայնքում հէկ կառուցելու նպատակով հողատարածք տրամադրելու, շինարարական աշխատանքներում աջակցելու, շահագործման ընթացքում հէկի աշխատանքները վերահսկելու դիմաց Ն.Ֆիլոսյանը, ընկերության հիմնադիր-մասնակիցների հետ նախնական պայմանավորվածությամբ, նշված ընկերությունից բաժնեմաս է ձեռք բերել եւ դարձել ընկերության մասնակից:

Օգտվելով համայնքի ղեկավարի իր լիազորություններից, եւ, ըստ էության, արդեն անցնելով հանցավոր պայմանավորվածության կատարմանը, Ն.Ֆիլոսյանը Դաստակերտ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.2 հա/2000քմ/ հողատարածքն ուղղակի վաճառքով օտարել է այն ընկերությանը, որի բաժնետեր է նաեւ ինքը:

Ավելին՝ Ն.Ֆիլոսյանը որեւէ կերպ չի փորձել կանխել կամ կասեցնել իր վաճառած հողատարածքում կատարվող հէկի ինքնակամ շինարարությունը, ինչը համայնքի ղեկավարի անմիջական պարտականությունն է: Ն.Ֆիլոսյանի ապօրինի գործողությունների հետեւանքով էական վնաս է պատճառվել համայնքի իրավունքներին եւ օրինական շահերին:

Ն. Ֆիլոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով եւ 308-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ դատախազություն

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Ս. Ալեքսանյանին

Պաշտոնատար անձանց ուղղված Ձեր նամակը՝ մեծն Սերոյի ծննդյան 100-ամյակին ընդառաջ, հոգեբուխ է, իր 25 դրույթի սանդղակով՝ սրտամոտ: Ընդսմին խորհում եմ, որ հոբելյանը պրագմատիզմով դույզն-ինչ պետք է անդրադառնա արդիականության որոշ խնդիրների լուծմանը, մասնավորապես՝ մանկավարժության բնագավառում:

Գրեթե կես դար անարժանս գյուղական ուսուցման ոչ երեւելի նվիրյալ եմ եւ, Սերոյին կարդալով, բազմակի անգամ թեւեր եմ առել ու ինքնաբավ ճախր ունեցել, որ նա պառնասին տենչացել-տիրել է գյուղական ուսուցչի կարգավիճակից: Թե ինչ ներուժ եւ հնարավորություններ ունի գյուղական ուսուցիչը՝ գյուղական ուսուցման նվիրյալը, հստակ երեւում է սերոյական անզուգական օրինակով:

Արդ՝ հրամայական է, որ Սերո-100-ի նախապատրաստման շրջանում բարձրաձայնենք արդի ժամանակաշրջանում ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ բացահայտումը, կարեւորումը եւ հետագա քայլերի ուղենշումը:

Գյուղական դպրոցը տկարացել է, եւ բոլորիս աչքի առաջ օր օրի խամրում է ոգեղենությունը: Կառավարումն ուրբանիստական բնույթ ունի, եւ գյուղուսուցման մեջ ի հայտ է եկել ստվերայինը, զորօրինակ՝ 5-ից պակաս աշակերտ ունեցող դասարաններում ուսուցիչը վարձատրվում է կես կամ քառորդ դրույքով, եւ դա՝ առանց իրավական հրահանգավորման…

Գյուղական ուսուցման առանձնահատկությունները ներառում են գեղջկական ավանդապահությունները, արհեստները, բարբառն ու ժողբանը, ազգագրական կոլորիտն իր ինքնատիպությամբ, համայնքին յուրահատուկ պահանջմունքները եւն….

…Սերոն ասում է կարեւորեք գյուղը, եւ դա սկսեք գյուղական ուսուցումից: Գյուղական ուսուցիչը, իհարկե, հակված է՝ ոգեշնչվել Սերոյից եւ սերոյավայել մի կամ մի քանի հրաշք գործել: Ստեղծագործող՝ գյուղին սիրահարված ուսուցչին պետք է գնահատել նաեւ սերոանուն պարգեւներով…

…Նորերս շրջանառեցին լուր, թե նոր նախարարություններ պիտի կազմակերպվեն, եւ շատերն են թերահավատ ու դեմ այդ նորույթին, ոմանք էլ ծիծաղում են: Մի ծիծաղելին էլ ինքս եմ հավելում՝ ստեղծենք գյուղական ուսուցման նախարարությունը: Այնուամենայնիվ՝ մտորելու է….

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ն աշխատանքի է հրավիրում դեղագործի՝ վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման փաստաթղթի առկայությամբ, համակարգչի (ինտերնետ, MS Word, MS Excel) իմացությամբ: Ցանկացողները կարող են դիմել տնօրենությանը՝ ք. Կապան, Բաղաբերդ 48 հասցեով, հեռախոսներ՝ 5-37-12, 5-44-45, 091-20-83-25:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործ է հարուցվել՝ Արեւիկ Հայկի Հարությունյանի կողմից Հրաչ Արտաշեսի Ղազարյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին: Բոլոր անձանց եւ կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Հրաչ Արտաշեսի Ղազարյանի գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ք. Կապան, Ս. Մելիք-Ստեփանյան 3/2, հեռախոս՝ /0285/ 5-29-59:

Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 21.11.2014թ.: